

բէցութեան և գործունէութեանց ասպարէզ: Դպրոցներն էլ նոյն կերպ են յառաջ գալիս և բազմանում առանց ձգտելու միօրինակութիւն և ծրագիրների միութիւն պահպանել: Նոքա կանգ չեն առնում նոյն իսկ ակնյայտի անկարգութեան առաջ, միայն թէ դպրոցական հիմնարկութիւնը յառաջ եկած լինի ուղղակի կեանքից, բաւականութիւն տայ հասարակութեան հասունացած պահանջներին: Այս պահանջը սուրբ է և պետութեան համար, ահա թէ ինչու նա դպրոցական գործում հնարաւոր եղած ազատութիւնն և անկասկածութիւնը շնորհել է դպրոցներին: Պետութիւնը դրամական օգնութիւնը հինգ տեսակի է բաժանել: 1) Նայած աշակերտների թուին և իւրաքանչիւր քննութեան առարկայի համար, այստեղ փողի քանակը փոփոխւում և յառաջագիմութեան թուանշանների համեմատ: 2) Նրպաստներ դպրոցական շէնքեր կանգնեցնելու համար: 3) Նպաստներ դպրոցական իրեր և գրքեր գնելու համար: 4) Նպաստ ուսանողներին: 5) Նպաստ առհասարակ այն դպրոցներին, որոնք իրենց կազմակերպութեամբ կատարելապէս համապատասխան են գիտութեանց և արուեստի ծրագրին: Այստեղ էլ վերջապէս է պետութեան միջամտութիւնը:

Ահա անգղիական դպրոցների այն համառօտ նկարագիրը որ կարելի է քաղել Լեկկիսկի գրքից և որը բաւական է ցոյց տալու համար, թէ որչափ տարբեր են Եւրոպայի մայր ցամաքի դպրոցներից և թէ ինչ հեռանքի է հասնում այդ տեսակ կրթութիւնն ու դաստիարակութիւնը:

Ս. 6.



ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿԱՄ ԿԱԹՈՒԿ ԿԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

Համառօտաբար ներկայացնում ենք այստեղ արևելեան վանականութեան ուրուագիծը և նրա բնորոշ առանձնայատկութիւնները ցոյց տալու համար պատմական կեանքում արև-

մտեանի՝ նրանից ունեցած մեծ տարբերութիւնը: Քրիստոս և Պողոս առաքեալը վանականութիւն չեն քարոզել և իրենք իբր վանական չեն ապրել: Առաջին դարու քրիստոնեաները զոհողութեան և Քրիստոսի երկրորդ դալստեան քաղաքարով ողբ որում կարծում էին, որ հեթանոսութեան նրա կրօնի և պետութեան մէջ իշխողը սատանան է: Նոքա զիտէին որ երկիրս Աստուած է ստեղծել և կառավարում, բայց մտածում էին, որ նա ժամանակաւորապէս սատանայի աւերման է ենթարկուած: Նոքա հաւատում էին նաեւ, որ այդ սատանայական աշխարհը շուտով դատաստանի պիտի ենթարկուի այդ պատճառով ևս ժամանակակից քրիստոնէութիւնը՝ խիստ կռիւ էր մղում հեթանոսական աշխարհի կոպիտ և նուրբ զգայականութեան դէմ: Քրիստոնէութիւնը իւր ամբողջ եռանդը գործադրում էր ուսուցանելով հեթանոսներին թէ նոքա «կենդանիներ չեն, այլ անմահ ոգիներ, ո՛չ թէ մարմնի և նիւթի գերի, այլ նրանց տէր և միայն կենդանի Աստուծոյ ծառաներ»: Եւ իսկապէս մինչև որ քաղաքակրթական այս իդէալը չհասկացուի մնացած գաղափարները պէտք է յետ մղուին: Ամուսնութիւնը ուտել խմելը վատ չէ, մարմինը նոյնպէս սուրբ է, բայց մարդն ինքն ապականում է նրանց իւր զգայականութեամբ: Հեթանոսութիւնից շատ աւելի հզօր մի սազնապ (կրօն) պատրաստեցին եկեղեցուն Գնոստիկեանները և Մարկիոնականները իրենց երկուութեամբ (զուլալիզմ): Առաջինը քարոզում էր հոգիների բարի Աստուծուց զատ, նրա ակոյեան յաւիտենական նիւթի մասին և թէ մարդկային հոգին՝ աստուածային այս կայծը, իւր թշնամուց՝ զգալականութիւնից յաղթուած, բռնուած, բանտարկուած էր մարմնի մէջ: Նա միայն մարմնի մահից յետոյ կարող էր ազատուել, իսկ վերջինս կենդանութեան ժամանակ կատարեալ ձգնութիւնը—ձանաչողութիւնը կամ դիտութիւնը (γνῶσις), կարող էր հոգիների սկզբնական աղբիւրի և նոցա մէջ՝ ներքին կապ պահել: Նոյն խնդիրներն էր շօշափում մարկիոնականութիւնը իւր գործնական պատուերներով:

Եկեղեցին յաղթեց այս երկուութեանը

և ցոյց տուեց, որ աշխարհն ևս բարի է և Աստուծոյ դործ, որ չարութիւնը միայն արարածների բնութեան ազատութեան հետեանքն է, և որ այդ ազատութիւնը անհրաժեշտ է: Չնայելով որ երկուութեան պարտութեամբ քրիստոնէութեան հակառակորդներն ստիպուած էին պատերազմի դաշար թողնելու, բայց այնու ամենայնիւ նորա չոչնչացան և երեմիական երեւան էին գալիս այս կամ այն աստուածաբանի գրուածքում:

Երկրորդ դարու կիսից սկսեց եկեղեցու մէջ մի նոր տագնապ (կրիզիս), այն էլ այն ժամանակ, երբ զեռ առաջինը չէր վերջացած: Քրիստոնէութիւնը տարածուել էր հռոմէական պետութեան ամեն ծայրերը, ամեն դասակարգերի մէջ—կայսերական պալատից սկսած մինչև յետին մշակի տնակը, զիտունների և տղէտների, ազաանների և անաղասների մէջ: Խնդիրը շատ ծանր էր և լուրջ, թէպէտ այդ ժամանակակիցները չէին ըմբռնում կամ եկեղեցին պէտք է աշխարհականանար և վերջնիս ձեւերն ու կարգերը կարելի եղածին չափ ընդունէր, կամ նա պէտք է կրօնապէս ոգևորուածների մի համայնք դառնար: Կամ նա համաշխարհային մի միսիոն պէտք է սկսէր, կամ դժուարըմբռնելի մի աղանդ մնար: Այս տագնապն ևս բարեբաղդարար շատ յաջող կերպով լուծուեցաւ և Բ-դ դարու սկզբում եկեղեցին պետական դարձաւ, չնայելով այն ազդարար ձայներին, որոնք յորդորում էին աշխարհային ամեն բարիքից հրաժարուելով անապատ քաշուել և Քրիստոսի Բ-դ Գալլատեան սպանել, ամբողջ կեանքը պահելով անցկացնել, ամուսնութիւնից և ամեն տեսակի մարմնական հաճաքից հրաժարուել, արհամարհել հոգևորականների մէջ երեւան եկած իշխանասիրական—նուիրապետական հակումները և նախնի քրիստոնէութեան դառնալ: Եկեղեցին յաղթեց այս բոլոր խոչնդոտները, այս «մոնտանիստները» և նրանց նախորդ «էնկրատիստները» նուաժուեցան ինչպէս Վնոստիկեանները: Միաժամանակ զօրեղացաւ նաև զանազան շրջաններում իսկական քրիստոնէութիւնը եկեղեցուց դուրս փնդուելու գաղափարը: Ի դուր չեն ասում, թէ այս հասկացողութիւնը վանականութեան սկիզբն է,

իսկական տարրերութիւնը միայն նրանումն է, որ մինչդեռ սորա սպասում են Քրիստոսի Բ-դ Վալտեան և իրենց աշխարհից հրաժարուելը զրանով են արդարացնում, փանականը ձգտում է իւր ներքին աշխարհի խաղաղութեամբ Աստուծոյ հետ սերտ յարաբերութեան մէջ լինել և այն աշխարհում արքայութեան արժանանալ: Մինչ վանականը աշխարհից պէտք է փախչէր իւր ուղած խաղաղութիւնը գտնելու համար, ընդհակառակը «մոնտանիստը» հանգիստ խղճով սպասում էր իւր անկեղծ Աստուծոյ արքայութեան:

Անցնենք այժմ 3-դ դարու եկեղեցուն: Շատերը կարծում են, որ եկեղեցին աշխարհականացել է Գ-դ դարում, բայց չարաչար սխալուում են: Առաքելական «Հրեային Հրեայ, Յոյնին Յոյն» բանաձևը՝ (Motto) շատ վասնզաւոր էր: Գ-դ դարու կիսերում եկեղեցին արդէն կատարելապէս աշխարհականացել էր, «Ատուութեան մէջ տէրութիւն» էր դարձել: Նախկին կրօնական յոյսերի և եղբայրսիրութեան տեղը նուիրապետական կարգերն ու կանոններն էին բռնել, որոնք սպառնում էին քրիստոնէական ազատութիւնը, եղբայրական (ἀδελφότης) հաւասարութեան հասկացողութիւնը ոչնչացնել: Նոր քրիստոնէութեան զաւառանքը մրցում էր փիլիսոփայական սխալմաների հետ, բայց շատ հեռու գնալով, և նոր պղատոնականութեան ազդեցութեան տակ: Զգայականութիւնից փրկուելու գաղափարը շատ մեծ տարրերութիւն ունէր նախնական քրիստոնէական սրբութեան գաղափարից: Ատուութեան հետ միանալու ձգտումը դարգացաւ և նրա իրագործման ժամանակ եկեղեցին աւելի կորցրեց՝ քան պէտք էր. նա չէր կարող այլ ևս քրիստոնէական բարոյականութիւնը անհատական կեանքում իրագործել, նա յաճախ պէտք է միայն շատ քչով բաւականանար (minimum), այսինքն՝ եկեղեցու իրաւարանական կամ պաշտաման կանոնների արտաքին հնազանդութեամբ: Չնայելով այդ բոլորին նա կարողացել էր քրիստոնէական ինքնուրոյն մի համայնք հիմնել և այն հաւատը հաստատել, որ իւր ընդհանուր կապը (Verband), եպիսկոպոսները, Ծնորհաց բաշխումը, Սուրբ Դիւքը, պաշտամունքը՝ (Kultus)

վաւերական և ճշմարիտ է, առաքելական հաստատութիւն, որից դուրս փրկութիւն չկար: Այսպէս էր դարձել եկեղեցին Պ-դ դարու վերջում:

Եկեղեցին չէր կարող այլ ևս պէտք եղած ներքին խաղաղութիւնը տալ: Այն աշխարհի աստուածային խաղաղութեան յուսով կարող էր իւր հաւատացեալներին ապահովացնել, բայց այս կեանքի փոթորիկների դէմ նրա ներքինը չէր կարող պաշտպանել: Ահա այս ժամանակներից սկսեց վանականութեան մեծ շարժումը: Ըղջաւորներ և մենակեացներ կաշին արդէն հին եկեղեցու մէջ Պ-դ դարու ընթացքում անսպասականները միանալով յաճախ ընդհանուր կեանք էին վարում: Նոր դարու սկզբնաւորութեան հետ իրենց թիւն ևս աճեց, նորա ոչ միայն աշխարհից էին փախչում, այլ և աշխարհականացած եկեղեցուց, այսինքն՝ եկեղեցու մէջ եկած աշխարհականութիւնից և ոչ թէ եկեղեցուց: Ժամանակակից աստուածաբանութիւնն ևս վարդապետում էր, որ «այր իմաստունը» երկրաւորը պէտք է ոչնչացնէր, եթէ երկնայինը՝ յաւիտեականը տեսնել և ժառանգել էր ցանկանում: Հռոմէական տէրութիւնն ևս աստիճանաբար դէպի իւր կործանումն էր դիմում, ապստամբութիւնների արիւնհեղութիւն, աղքատութիւն, հիւանդութիւններ ներսից, ամեն կողմից վրայ ընկնող բարբարոս ժողովուրդների արշաւանքները դրսից, դրեթէ ուժասպառ էին արել տիեզերական պատմութեան այս հսկային: Եւ ոչ ոյժ էր հակադրում այս վտանգները: Չէր պետութեան և համայնական քաղաքակրթութեան գաղափարները նսեմացել էին, թերթիքը մանաւանդ հանդէսէր աստիճանի էր հասել: Որտեղ կարող էր այն անկումը աւելի զգալի դառնալ, քան Ալեքսանդրիայում, այն ժամանակուայ հեթանոսական և քրիստոնէական քաղաքակրթութեան միջավայրում, և այս պատճառով զարմանալի չէ՝ որ մենակեցութեան, վանականութեան գաղափարները այնտեղ են ծնւում:

Բայց որո՞նք էին զարգացման այն նախապիճանները, որ վանականութիւնը դէպի իւր գերակայ գաղափարն (իդէալ) առաջնորդե-

ցին: Ալեքսանդրիայի նորախարժից (կատեսիսներին) զարոցում իրր կեանքի գերակայ գաղափարը համարուում էր Սոկրատեսան γυνῶν (ճանիր զքեզ) սկզբունքը: Նրանց կարծիքով իսկական իմաստունը չպէտք է զբաղուէր առօրեայ կեանքի սովորական հոգսերով, նա պէտք է ներքին աշխարհն ուսումնասիրէր, այսպիսով միայն կարող էր հոգին ազատ արտաքին կարիքներից և զգացական հակումներից՝ բարձրագոյն գաղափարներով (Idee) զբաղուել և վերջապէս Անտեսանելու (Աստուծոյ) տեսութեան արժանանալ: Աշխարհն անիծելու աշխարհից խուսափելու այս փարդապետութիւնն են քարոզել Ալեքսանդրիայ եկեղեցական փիլիսոփաները, մանաւանդ Օրիգենէս: Ով որ Պրիգոր Աքանէրագործի (Θεολογικός) իւր մեծ փարդապետի մասին գրած ներքոյը կարդացել է, նա կտեսնէ, որ վանականութեան գաղափարի ծագումը Օրիգենէսի գրուածքներում պէտք է փնդուել: Նա իւր բարոյագիտութեան մէջ կամ գործնական կեանքում ևս չի հետեւել բացառապէս ստոյիկեան կամ նոր-պլատոնական կեանքի բարձրագոյն գաղափարին, այլ ընդհակառակը՝ բոլոր նախինքն բարոյական գլխաւոր ուղղութիւնները, մինչև անգամ՝ քրիստոնէականը, նրա գրուածքներում խաչում են միմեանց: Եղիպտական աստուածաբանների պատմական մեծ նշանակութիւնն ևս հենց իրենց այս առանձնայատկութեան մէջ պէտք է որոնել: Նոքա են միացրել մինչև այն ժամանակ եղած ծանաչողութեան տեսութիւնները (Erkenntnistheorie) և գործնական կանոնները՝ քրիստոնէական դաւանանքի և քրիստոնէայի մէջ և ապահովել «Յայտնութիւն» անուան տակ, այնպէս որ օրինակի համար Օրիգենէսին նոյն իրաւունքով կարելի է արիտականութեան և ուղղափառութեան աստուածաբանութեան աշխարհականացման և վանական ձգտումների՝ պաշտպան համարել: Նա արդէն դուշակում էր, որ քրիստոնէութիւնը պետութեան հետ խաղաղ պիտի ապրէր, և այդ խաղաղութեան մէջ բարեպաշտ վանականը իւր ներքին աշխարհով պիտի զբաղուէր: Իսկ ով որ բարեպաշտ և գիտնական չէր, նա հայեցողութեան անսպառ աղբիւր ունէր իւր հաւատը: Ի հարկէ այս

մտքերը քրիստոնեականների մեծամասնութեան համար երբեք վճռական չեն եղել, և այն սակավաթիվն փանական միաբանութիւնները, որ Որիգենիսի աշակերտ Հիերասի (Hierakas) առաջնորդութեամբ կազմուեցին, կարիքը և իրենց համայնական կեանքի դէմ ունեցած ատելութիւնը ցրուեց մինչև որ Կոստանդինի եկեղեցին նրանց անապատ քշեց:

Վ-դ դարու 40-ական թուականներին այս շարժումը շատ զօրեղացաւ. փանականները փախչում էին ոչ միայն աշխարհից, այլ և աշխարհականացած եկեղեցուց, որովհետեւ նոքա համոզուած էին, որ ձգնութեամբ ամեն բան փոխարինել կարող են: Եկեղեցին ատուպուած էր այս շարժումը դուրսը:

Պատմական ամենապարմանայի երեւոյթներէից մէկն է, այս: Այն ժամանակ երբ քրիստոնէական եկեղեցին ձգտում էր բարձրագոյն իրաւարան (Rechtsinstitut) և ս. խորհրդոյ ադրիւր լինելու, նա բնդուեց քրիստոնէական կեանքի մի իդէալ, որը իւր իսկական էութիւնից զուրս միայն գոյութիւն ունէր. բայց միևնոյն ժամանակ նոյն երեւոյթը ամենափայլուն ապացոյցներէից մէկն է եկեղեցու ունեցած ոյժի, որը այնքան խոր արմատներ էր ձգել իւր հեռեդղներէ հոգում, որ փանականութիւնը, նոյն իսկ իւր ամենազօրեղ կազմակերպութեան շրջանում, չհամարձակուեց եկեղեցին քննադատել և Մոստանականութեան նման վտանգ տպառնալ: Ի հարկէ զանազան ժամանակներում եղան անհասանելի որոնք բողոքեցին և հոգեւորականների և փանականների մէջ լարումներ տեղի ունեցան, բայց այդպիսի երեւոյթները միշտ մասնաւոր տեղական բնաւորութեան դրոշմ են կրել:

Բայց ի՞նչն էր զրդում հաղարաւոր մարդկանց դէպի փանական կեանքը, շարժառիթները բազմապիսի են. ոմանք ուզում էին բացարձակապէս սուրբի հոգակ ստանալ, ուրիշները զոլած էին աշխարհից և փախչում էին զգայականութիւնից, ոմանք վախճում էին աշխատանքից, ուրիշները ուզում են իբր իսկական փիլիսոփայ ապրել: Բազմազան էին պատճառները, բայց լուսկիաց ձգնաւորի կողքին հանդէս եկած ցնորարանութիւնը և բարբերի ապականացումը անտոյցման կարգ և

կազմակերպութիւն էին պահանջում. և ահա այսպէս ծագեց իսկական փանական կեանքը, որը մեզ 2 որոշ ձևերով է յայտնի՝ անապատականներ (այսօրուայ մաքով Eremiten colonien) և իսկական վանքերը (Kloster): Այս հաստատութեանց համար գրուած կանոնները ցոյց են տալիս մեզ ձգնութեան լրջութիւնը և անկարգութեանց քանակն ու որակը: Ի հարկէ այս շրջանում երեան եկան նաեւ այնպիսի անապատների, որոնք մոլիոսնդութիւնը զազալմակեմին հասցրին. բայց բոլոր հաստատութիւնների մէջ տիրում են հետեւեալ սկզբունքները. 1) Հայեցողական կեանք, 2) Ազքատութիւն, 3) Ամուրթութիւն ու զգաստութիւն, 4) Կոնարհութիւն: Բայց ո՞րքան տարբերում էին նոքա իրականութեան մէջ միմեանցից. ոմանք իրենց առանձնութեան մէջ յայտնադրեցին բնութիւնը և ապրում էին իբր նրա հարազատ զաւակներ:

Վ-դ դարու մենակեացներից մեկը բնութեան այնպիսի պանչելի նկարագրութիւններ ունին, որոնց նմանը հին դարը մեզ չատքիչ է թողել. նոքա ապրում էին բնութեան մեծ պարտիզի մէջ իբր Աստուծոյ ուրախ զաւակներ. և այդ պարտիզի ծանաչողութեան (Չարի և Բարեւոյ) ծառի պտուղը քաղելը այլ ևս իրենց արգելուած չէր, իրենց աշխատանքը նոյնք չէր, այլ երջանկութիւն: Բայց ուրիշները ձգնութիւնը այլ կերպ էին հասկանում: Նոքա փախչում էին ոչ միայն ժամանակակից քաղաքակրթութիւնից, այլ և բնութիւնից, ոչ միայն հասարակական կեանքից, այլ մարդուց առ հասարակ, որովհետեւ ամեն բան մեղաց առիթ էր տալիս. մէկը շարչարում էր իրեն սովածութեամբ մինչև մեռնելու աստիճանին, միւսը զաղանի նման թափառական կեանք էր վարում, մի երրորդը իրեն նեղոսի ծաշիճանքն էր ձգում և միջատներին շարչարել տալիս, չորրորդը՝ կլասմերկ ամառ և ձմեռ, տարիներ շարունակ ապրում էր մի սեան վրայ: Այսպիսով էին կամենում նոքա մարմինը ծնել և հոգեկան խաղաղութիւն ձեռք բերել, մաքուր լինել և լուել. թէպէտե իրենք ևս ախպուած էին խառտվանելու, որ այդ իրենց շատ քիչ էր

յաջողում և զրա փոխարէն նորա ստացան ահաւելի և վառ երեւակայութիւնս որ իրենց մաքերինս իրականութեան ձեւ էր տալիս և ահա այսպէս երեւան եկան բազմաթիւ վեպեր և նորավեպեր, որոնց մէջ ճշնաւորներին արկածներն էին պատմուած և որոնք ժամանակակիցներէց մեծ սիրով ընդունուեցին: Այսպէս ծագեց զրականութեան մի նոր և տարօրինակ ճիւղ, վանական գեղեցիկ զրականութիւն (Mönchsbellettristik), որ դարեր շարունակ կրթական նշանակութիւն է ունեցել: Բայց որն է համապատասխանում այս 2 փայտանքից իսկական վանականի իդէալին, բնութեան և Աստուծոյ ուրախ զաւակը, թէ հերոս ճշնաւորը: Ի հարկէ վերջինը որովհետեւ ժամանակի հայեացքի համաձայն բարձրագոյն իդէալը կարող էր միմիայն աշխարհից դուրս իրագործուել: Նա հենց ճշնաւորական կեանքի մէջն էր թաղնուած: Ճշնութիւնը միաժամանակ և՛ միջոց էր նպատակի և՛ ինքնատիպեան նպատակ, որովհետեւ նա կարող էր միմիայն Աստուծոյ հայեցման առաջնորդել: Քաղաքակրթական, բնագիտական, պատմական և այլ ամեն տեսակի բարոյական գործունէութիւն անկատար էր և խանգարում էր միայն վերոյիշեալ նպատակի իրագործումը: Մարդս միմիայն ինքն իրենով պիտի զբաղուէր և ոչ թէ հասարակական-բարոյական կեանքով: Աւերանով մենք որոշեցինք վանականութեան իսկական գաղտնիքը, և նոյն ժամանակ յունական քաղաքակրթութեան քրիստոնէութեան մասին ունեցած հայեացքը: Աշխարհականացած եկեղեցին ևս ձգտում էր իւր համար մի իդէալ գծել, որովհետեւ հին բարոյական կարգերը, այլ ևս ժամանակի պահանջներին չէին բաւականացնում և նա ևս կարծում էր, որ այդ իդէալը ծայրայեղ ձգնութեան մէջն է: Այսպէս է մինչև օրս յունական եկեղեցու իդէալը. նա զգում է որ հասարակական կեանքի բարոյականը շատ սուր աստիճանի վրայ է, ձգտում է նրան բարձրացնել, բայց ձգտում է գէպի անհասանելին և դատարկը: Այսպիսով մենք ունինք յունական եկեղեցու հետեւալ պատկերը մեր առաջ, աշխարհականացած եկեղեցին տերութեան ազդեցութեան տակ է, ժողովրդականութեան հետ այնպէսները միացած,

որ նա միմիայն արարողութիւններով է ազատ և չի հետեւում ոչ մի սեփական ինքնուրոյն նպատակի, և իւր անդամների բարոյական կեանքի վրայ շատ չնչին ազդեցութիւն ունի: Վանականութիւնը չունի պատմական նպատակներ և այդ պատճառով ևս չունի պատմական զարգացում:

Ժամանակի ընթացքում վանականութիւնը մտեցաւ աշխարհականացած եկեղեցուն 5—7 դար տեղի ունեցած ակեղբական ժողովները նորա ազդեցութեան տակ են եղել, և նրանց մէջ կազմուած դաւանարանութեան վանական երեւակայութիւնը ահադին ազդեցութիւն է ունեցել: Նա յաղթել է ամեն տեղ և նոյն իսկ բարեփոխութեան այնքան նախանձանդիւր կայսրների բոլոր ծրագրները խանգարել: Բայց հենց այն պատճառով, որ վանական իդէալը 8-րդ և 9-րդ դարում վերջնականապէս յաղթանակեց և այնուհետեւ ինքն իրեն թողնուեց, վանականութիւնը և եկեղեցին այսօր կատարելապէս տերութեան իշխանութեան ներքոյ են:

Փոխադ. Յ. Թօփմեան.



ՔՆՆՈՒԹԻՒՆ ԴԱՐԱՔԱԳԻ ԲԱՐԲԱԹԻ.

(Շարունակութիւն ևս վերջ*)

Ն.

1. Ամէն դիւրեղով ալ անփոփոխ կը մնայ սովորաբար. Օր. նոնը՝ նուռն. նախիր՝ հմ. նըվրկն-սկյոյ՝ նաւակառէք. փոխեն՝ փոխենդ. ծնիւ՝ ունիւմ. անդր՝ սանար. փնցցուն՝ վաթսուն ևւն:

2. Առանձին փոփոխութիւն են կրած դրաբարի և յօդով վերջացող բառերը. փոփոխութիւն՝ որ ուրիշ բարբառներու մէջ դժուար է պատահել:

Այս կարգի բառերը՝ ինչպէս յայտնի է, ուրիշ բարբառներու մէջ երկու տեսակ փոփոխութիւն կը կրեն. այն է 1. կամ բոլորովին կը